գ. օգտահանության ծախսեր (կիրառելի է միայն հնացող, սահմանափակ օգտագործման ժամկետ ունեցող գնահատվող օբյեկտների համար):

11) Դիսկոնտավորման դրույքաչափը պետք է արտացոլի ոչ միայն դրամական միջոցի ժամանակավոր արժեքը, այլ նաև այն ռիսկերը, որոնք կապված են օբյեկտի ապագա շահագործման և դրամական հոսքերի տեսակի հետ:

12) Դիսկոնտավորման դրույքաչափը պետք է համապատասխանի դրամական հոսքերի տեսակին:

13) Դիսկոնտավորման դրույքաչափերի ընդունման կամ հաշվարկման տարածված մեթոդները հետևյալն են՝



ա. կապիտալի գնագոյացման մոդել ԿԳՄ (CAPM),  
բ. կապիտալի միջին կշռված արժեք ԿՄԿԱ (WACC),  
գ. դիտարկվող կամ ստացված դրույքաչափերի և եկամտաբերության հարաբերակցություն,

դ. Կումուլյատիվ մեթոդ:

14) Գնահատողները, համապատասխան դիսկոնտավորման դրույքը որոշելու համար, կարող են օգտագործել նաև այլ հիմնավորված մեթոդներ:

15) Դիսկոնտավորման դրույքաչափը մշակելիս գնահատողը պետք է՝

ա. պահպանի դիսկոնտավորման դրույքաչափը որոշելու համար օգտագործված նյութերը,

բ. դիսկոնտավորման դրույքաչափը որոշելու համար տրամադրել հիմնավորումներ՝ ներառյալ օգտագործված տվյալների նույնականացումը և դրանց ստացման կամ տեղեկատվության սկզբնաղբյուրը:

16) Գնահատողները պետք է հաշվի առնեն այն նպատակը, որի համար իրականացվել է կանխատեսումը և կանխատեսման ենթադրությունների համապատասխանությունը կիրառվող արժեքի տեսակին: Եթե կանխատեսվող ենթադրությունները չեն համապատասխանում արժեքի տեսակին, ապա կարող է անհրաժեշտություն առաջանալ կանխատեսման կամ դիսկոնտավորման դրույքաչափի ճշգրտում կատարելու:

17) Գնահատողները, դիսկոնտավորման դրույքաչափը մշակելիս, պետք է հաշվի առնեն գնահատվող օբյեկտի կանխատեսվող դրամական հոսքին հասնելու ռիսկը: Մասնավորապես, գնահատողը պետք է գնահատի, թե արդյոք կանխատեսվող դրամական հոսքերի ենթադրությունների հիմքում ընկած ռիսկը ներառված է դիսկոնտավորման դրույքաչափում:

18) Եթե գնահատողը որոշում է, որ դիսկոնտավորման դրույքաչափում կանխատեսվող դրամական հոսքերում ներառված որոշակի ռիսկեր հաշվի չեն առնվել, ապա այդ դեպքում գնահատողը պետք է՝

1) ճշգրտի կանխատեսումը,

2) ճշգրտի գեղջման դրույքաչափը՝ հաշվի առնելով դեռևս չհայտնաբերված ռիսկերը:

Եկամտայի մոտեցումը չի կիրառվել, քանի որ տվյալ տարածաշրջանում շատ սակավաթիվ և ոչ արժանահավատ են եկամտային մոտեցման տվյալներ:

**Ծախսային** մոտեցման հիմքում ընկած է այն սկզբունքը, ըստ որի գնորդը գնահատվող օբյեկտի համար չի վճարի ավելին, քան հավասար օգտակարությամբ օբյեկտ ձեռք բերելու դեպքում, լինի դա գնման կամ կառուցման միջոցով, գործընթացը բարդացնող գործոնների բացակայությամբ՝ անհարկի ժամանակ, անհարմարություն, ռիսկ կամ այլ գործոններ: Այս մոտեցումը հնարավոր է դարձնում ստանալ արժեք օբյեկտի արժեքը փոխարինման կամ վերարտադրման ընթացիկ ծախսերի որոշման միջոցով և ֆիզիկական մաշվածության բոլոր տեսակների կիրառմամբ:

1) Ծախսային մոտեցումը պետք է կիրառվի և նշանակալի կշիռ ստանա հետևյալ հանգամանքներում.

ա. մասնակիցները կկարողանան վերարտադրել օբյեկտը գրեթե նույն օգտակարությամբ, ինչպես գնահատվող օբյեկտը, առանց որևէ նորմատիվ կամ իրավական սահմանափակումների, և այդ օբյեկտը կարող է այնքան արագ վերարտադրվել, որ



մասնակիցը չուզենա գնահատվող օբյեկտի անհապաղ օգտագործման հնարավորության համար հավելյալ վճարել,

բ. գնահատվող օբյեկտն ուղղակիորեն եկամուտ չի բերում, իսկ դրա առանձնահատուկ բնույթը թույլ չի տալիս եկամտային կամ համեմատական մոտեցումների կիրառումը,

գ. օգտագործվող արժեքի տեսակը հիմնականում հիմնված է փոխարինման կամ վերարտադրման ծախսերի վրա:

2) Չնայած սույն կետի 1-ին ենթակետում նշված հանգամանքները ցույց են տալիս, որ պետք է ծախսային մոտեցում կիրառվի և դրան զգալի կշիռ հաղորդվի, ստորև բերված են լրացուցիչ հանգամանքներ, որոնց դեպքում ծախսային մոտեցումը կարող է կիրառվել և զգալի կշիռ ունենալ: Ծախսային մոտեցման օգտագործման պարագայում գնահատողը պետք է հաշվի առնի այլ մոտեցումներ կիրառելու և արդյունքների համաձայնեցման կշռման հնարավորությունը՝ ծախսային մոտեցման կիրառման շրջանակներում ստացված արժեքի ցուցիչի հաստատման նպատակով, մասնավորապես.

ա. մասնակիցները կարող են հաշվի առնել համադրելի օգտակարության օբյեկտների վերարտադրման հնարավորությունը, սակայն գոյություն ունեն նորմատիվ իրավական բնույթի կամ գնահատվող օբյեկտի վերարտադրման համար անհրաժեշտ ժամանակի զգալի կորուստների հետ կապված սահմանափակումներ,

բ. երբ ծախսային մոտեցումն օգտագործվում է այլ մոտեցումների հիմնավորվածությունն ստուգելու համար (օրինակ՝ ծախսային մոտեցման օգտագործումն ստուգելու համար, կարող է արդյոք գնահատվող օբյեկտը որպես գործող ձեռնարկություն լուծարման ժամանակ ավելի մեծ դրամական արժեք ունենալ թե ոչ),

գ. գնահատվող օբյեկտը վերջերս է ստեղծվել, ուստի ծախսային մոտեցման կիրառման ժամանակ օգտագործվող ենթադրությունները բարձր հուսալիություն ունեն:

3) Մասնակիորեն ավարտված օբյեկտի արժեքը, որպես կանոն, արտացոլում է օբյեկտի ստեղծման ընթացքում մինչ ներկա դրությամբ կատարված ծախսերը (և այն, թե այդ ծախսերն արդյոք իրենց ազդեցությունն ունեցել են օբյեկտի արժեքի վրա), և օբյեկտի ստեղծման ավարտից հետո արժեքի վերաբերյալ մասնակիցների ակնկալիքները, միևնույն ժամանակ հաշվի են առնվում գնահատվող օբյեկտի ստեղծման ավարտի համար անհրաժեշտ ծախսերն ու ժամանակը՝ ներառյալ շահույթի և ռիսկի համապատասխան ճշգրտումները:

Առկա է ծախսային մոտեցման երեք մեթոդ՝ ծախսերի փոխարինման մեթոդ, որն արտացոլում է համարժեք օգտակարությամբ նմանատիպ օբյեկտի ստեղծման ծախսերի հաշվարկման միջոցով որոշվող արժեքը, ծախսերի վերարտադրման մեթոդ, որն արտացոլում է օբյեկտի ճշգրիտ նմանակի վերստեղծման ծախսերի հաշվարկման միջոցով որոշվող արժեքը և բաղադրիչային մեթոդ, որի միջոցով օբյեկտի առանձին բաղադրիչ մասերի արժեքները գումարելով հաշվարկվում է գնահատվող օբյեկտի արժեքը:

1) Սովորաբար փոխարինման արժեքը ճշգրտվում է՝ հաշվի առնելով ֆիզիկական մաշվածության և բոլոր համապատասխան ձևերը: Նման ճշգրտումներից հետո դա կարելի է անվանել փոխարինման արժեք:

2) Փոխարինման արժեքի մեթոդի կիրառման հիմնական փուլերն են՝

ա. Մասնակցի բոլոր այն ծախսերի հաշվարկ, որը ցանկանում է ստեղծել կամ ձեռք բերել համարժեք օգտակարություն ապահովվող օբյեկտ,



բ. որոշել, թե արդյոք գոյություն ունի գնահատվող օբյեկտի ֆիզիկական, ֆունկցիոնալ և արտաքին մաշվածության հետ կապված որևէ արժեզրկում,

գ. գնահատվող օբյեկտի արժեքը որոշելու համար ընդհանուր ծախսերը նվազեցնել կուտակված (ընդհանուր) մաշվածությամբ:

3) Փոխարինման ծախսերը, որպես կանոն, վերաբերում են ժամանակակից համարժեք օբյեկտին, որն ապահովում է գնահատվող օբյեկտի նմանատիպ գործառույթներ և համարժեք օգտակարություն կառուցվել կամ արտադրվել է ժամանակակից տնտեսապես արդյունավետ նյութերի և տեխնոլոգիաների օգտագործմամբ:

4) Վերարտադրման արժեքն ընդունելի է հետևյալ հանգամանքներում.

ա. ժամանակակից համարժեք օբյեկտի ստեղծման ծախսերը գերազանցում են գնահատվող օբյեկտի ճշգրիտ պատճենի վերարտադրման ծախսերը,

բ. գնահատվող օբյեկտի օգտակարությունը կարող է ապահովել միայն ճշգրիտ պատճենով, այլ ոչ թե ժամանակակից համարժեք օբյեկտով:

5) Վերարտադրման ծախսերի մեթոդի կիրառման հիմնական փուլերն են.

ա. այն բոլոր ծախսերի հաշվարկը, որոնք կկրի մասնակիցը, որը ձգտում է ստեղծել գնահատվող օբյեկտի ճշգրիտ պատճենը,

բ. որոշել, թե արդյոք գոյություն ունի գնահատվող օբյեկտի արժեզրկում ֆիզիկական, ֆունկցիոնալ և արտաքին մաշվածության հետ կապված,

գ. գնահատվող օբյեկտի արժեքը որոշելու համար ընդհանուր ծախսերը նվազեցնել կուտակված (ընդհանուր) մաշվածության չափով:

6) Բաղադրիչային մեթոդը սովորաբար օգտագործվում է ներդրումային ընկերությունների կամ այլ տեսակի օբյեկտների կամ ընկերությունների համար, որոնց համար արժեքը հիմնականում պայմանավորված է նրանց ներդրումային արժեքի չափից:

7) Բաղադրիչային մեթոդի հիմնական փուլերն են.

ա. գնահատվող օբյեկտի կազմի մեջ մտնող յուրաքանչյուր բաղադրիչի գնահատում՝ համապատասխան գնահատման մոտեցումների և մեթոդների կիրառմամբ,

բ. գնահատվող օբյեկտի արժեքն ստանալու համար բաղադրիչ օբյեկտների արժեքների գումարում:

8) Ծախսային մոտեցումը պետք է ներառի բոլոր ծախսերը, որոնք տվյալ մասնակիցը կարող է կրել:

9) Արժեքի տարրերը կարող են տարբերվել՝ կախված գնահատվող օբյեկտի տեսակից և պետք է ներառեն ուղղակի և անուղղակի ծախսեր, որոնք պահանջվում են գնահատման ամսաթվի դրությամբ օբյեկտի փոխարինման (վերարտադրման) համար:

10) Որոշ ընդհանուր կետեր, որոնք պետք է հաշվի առնել, մասնավորապես՝

ա. ուղղակի ծախսեր (նյութեր, աշխատուժ),

բ. անուղղակի ծախսեր (տրանսպորտային ծախսեր, տեղադրման ծախսեր, մասնագիտական վճարներ (նախագծային, թույլտվություն, ճարտարապետական, իրավաբանական և այլն), այլ վճարներ (միջնորդավճարներ և այլն), ընդհանուր ծախսեր, հարկեր, ֆինանսական ծախսեր (օրինակ՝ պարտքային ֆինանսավորման տոկոսներ) և ձեռնարկատիրական շահույթ):



11) Երրորդ կողմից ձեռք բերված գնահատվող օբյեկտը, ենթադրաբար արտացոլում է օբյեկտի ստեղծման հետ կապված ծախսերը, ինչպես նաև իրենց ներդրումների վերադարձն ապահովելու համար որոշակի շահույթի ձև: Համաձայն այն արժեքի տեսակի, որոնք ենթադրում են հիպոթետիկ գործարք, կարող է նպատակահարմար լինել ներառել շահույթի ենթադրյալ նորմը որոշակի ծախսերի համար, որը կարող է արտահայտված լինել նպատակային շահույթի, միանվագ գումարի, ծախսերի կամ արժեքի տոկոսային վերադարձի տեսքով:

12) Երբ ծախսերը հաշվարկվում են երրորդ կողմի մատակարարների կամ կապալառուների փաստացի, նշված կամ գնահատված գների հիման վրա, ապա այդ ծախսերն արդեն կներառեն երրորդ կողմի շահույթի ցանկալի մակարդակը:

13) Գնահատվող օբյեկտի ստեղծման ժամանակ կատարված փաստացի ծախսերը կարող են հասանելի լինել և ապահովել գնահատվող օբյեկտի արժեքի համապատասխան ցուցանիշ: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է կատարել ճշգրտումներ հետևյալն արտացոլելու նպատակով.

ա. ծախսման ամսաթվի և գնահատման ամսաթվի միջև եղած ծախսերի տատանումները,

բ. ցանկացած ոչ բնորոշ կամ բացառիկ ծախսերը կամ խնայողությունները, որոնք արտացոլված են ծախսերի վերաբերյալ տվյալներում, սակայն չեն առաջանում համարժեք օբյեկտի ստեղծման գործընթացում:

Մաշվածություն (Արժեզրկում/Հնացում) հասկացությունը վերաբերում է այն ուղղումներին, որոնք իրականացվում են հավասար օգտակարությամբ օբյեկտի ստեղծման հաշվարկային ծախսերի նկատմամբ՝ գնահատվող օբյեկտի արժեքի վրա ցանկացած մաշվածության ազդեցության արտացոլման նպատակով: Մաշվածություն հասկացությունը տարբերվում է ամորտիզացիայի հասկացության իմաստից. վերջինս կիրառվում է ֆինանսական հաշվետվություններում կամ հարկային օրենսդրության մեջ, որտեղ այն սովորաբար վերաբերում է որոշակի կապիտալ ներդրումների ծախսերի մեջ համակարգված միջժամանակային ընդգրկման մեթոդին:

1) Մաշվածության հետ կապված ճշգրտումները դիտարկվում են հետևյալ տեսակների համար, որոնք ուղղումներ կամ ճշգրտումներ կատարելիս կարող են հետագայում բաժանվել ենթատեսակների.

ա. ֆիզիկական մաշվածություն՝ գնահատվող օբյեկտի կամ դրա բաղադրիչների ֆիզիկական մաշվածության պատճառով օգտակարության ցանկացած կորուստ, որն առաջացել է օգտագործման հետևանքով և տարիքից,

բ. ֆունկցիոնալ մաշվածություն՝ գնահատվող օբյեկտի անարդյունավետության հետևանքով առաջացած օգտակարության ցանկացած կորուստ, համեմատած դրա փոխարինման հետ, ինչպիսիք են նախագծումը, տեխնիկական բնութագրերն ու տեխնոլոգիայի հնացած լինելը,

գ. արտաքին կամ տնտեսական մաշվածություն՝ գնահատվող օբյեկտի նկատմամբ արտաքին համարվող տնտեսական կամ տեղական պայմանների հետևանքով առաջացած օգտակարության ցանկացած կորուստ: Այս տեսակի մաշվածությունը կարող է լինել ժամանակավոր կամ մշտական:



2) Մաշվածության հաշվարկման ժամանակ պետք է հաշվի առնել գնահատվող օբյեկտի օգտակար ծառայության ֆիզիկական և տնտեսական ժամկետը.

ա. օգտակար ծառայության ֆիզիկական ժամկետը ցույց է տալիս, թե որքան երկար ժամանակ կարող է օգտագործվել գնահատվող օբյեկտը մինչ այն մաշված համարվելը կամ, երբ նրա վերանորոգումն այլևս տնտեսապես նպատակահարմար չի լինի պլանային սպասարկման պարագայում, առանց հաշվի առնելու վերակառուցման կամ վերասարքավորման որևէ հնարավորություն,

բ. օգտակար ծառայության տնտեսական ժամկետը ցույց է տալիս, թե որքան ժամանակ գնահատվող օբյեկտը կարող է ֆինանսական շահույթ կամ ոչ ֆինանսական օգուտներ բերել իր ընթացիկ օգտագործման մեջ: Դա կախված կլինի դրա ֆունկցիոնալ կամ տնտեսական մաշվածության աստիճանից:

3) Բացառությամբ տնտեսական կամ արտաքին մաշվածության որոշ տեսակների, գնահատվող օբյեկտի և հիպոթետիկ օբյեկտի միջև, որի վրա է հիմնված փոխարինման կամ վերարտադրության հաշվարկային արժեքը: Սակայն, երբ կան մաշվածության ազդեցության շուկայական հիմնավորումներ արժեքի վրա, ապա այդ հիմնավորումները պետք է հաշվի առնել:

4) Ֆիզիկական մաշվածությունը հաշվարկվում է երկու եղանակներով՝

ա. վերականգնվող, երբ մաշվածության վերացման հետ կապված ծախսերը տնտեսապես արդարացված են,

բ. չվերականգնվող, երբ մաշվածության վերացման հետ կապված ծախսերը տնտեսապես արդարացված չեն:

5) Գոյություն ունի ֆունկցիոնալ մաշվածության երկու ձև՝

ա. ավելցուկային կապիտալ ծախսեր, որոնք կարող են պայմանավորված լինել շինարարության նախագծման, շինարարական նյութերի, արտադրական տեխնիկայի կամ մեթոդների փոփոխություններով, որոնք գնահատվող օբյեկտի համեմատ ավելի ցածր կապիտալ ներդրումներով ժամանակակից համարժեք օբյեկտների հասանելիության են հանգեցնում,

բ. ավելցուկային գործառնական ծախսերը, որոնք կարող են պայմանավորված լինել նախագծման բարելավումներով կամ ավելորդ արտադրողականությամբ, որոնք գնահատվող օբյեկտի համեմատ հանգեցնում են ավելի ցածր գործառնական ծախսերով ժամանակակից համարժեք օբյեկտների հասանելիությանը:

6) Տնտեսական մաշվածությունը կարող է առաջանալ, երբ արտաքին գործոններն ազդում են առանձին օբյեկտների կամ բոլոր օբյեկտների վրա, և դրանք պետք է նվազեցվեն ֆիզիկական և ֆունկցիոնալ մաշվածություններից հետո:

7) Իրացվելի օբյեկտները չպետք է ուղղվեն համեմատական մոտեցման շրջանակներում սահմանված իրենց շուկայական արժեքից ավելի ցածր արժեքով:


Այսպիսով կիրառվել է ծախսային և համեմատական մոտեցումները, իսկ եկամտային մոտեցման չկիրառելը գնահատողի կարծիքով հիմնավորված է:



## 12. Շուկայական արժեքի հաշվարկ ծախսային մոտեցմամբ

Ծախսային մոտեցմամբ անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատումը իրականացվում է հետևյալ փուլերով.

- 1) հողամասի շուկայական արժեքի որոշում,
- 2) շենքերի և շինությունների վերարտադրման (կամ փոխարինման) ծախսերի որոշում,
- 3) շենքերի և շինությունների կուտակված մաշվածության մեծության որոշում,
- 4) անշարժ գույքի շուկայական արժեքի որոշում, որպես հողամասի շուկայական արժեքի և շենքերի ու շինությունների վերարտադրման (կամ փոխարինման) ծախսերի հանրագումար՝ նվազեցված կուտակված մաշվածության չափով:



Համեմատվող գույքերի վաճառքների (կամ առաջարկների) գների ճշգրտումն իրականացվել է հետևյալ կարգով.

# ՀՀ ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ «ԱՐՄԷՔՍՊԵՐՏԻԶԱ» ՍՊԸ



I) Առաջին հերթին կիրառվել են գործակիցներ ըստ վաճառքի պայմանների և շուկայի վիճակի: Սրանցից յուրաքանչյուր հաջորդը կիրառվել է նախորդ արդյունքի նկատմամբ:

II) Երկրորդ հերթին իրականացվել են անմիջականորեն անշարժ գույքին վերաբերող ճշգրտումները: Սրանք կատարվել են ցանկացած կարգով, այսինքն կամայական հերթականությամբ:

Գնագոյացման այն գործոնները, որոնք նախատեսված են ստանդարտով, սակայն որոնցով գների ճշգրտումներ չեն կատարվել ստորև բերված աղյուսակում, ուրեմն դրանք

ա) կամ կիրառված գործոններից էականորեն չեն տարբերվում,

բ) կամ էլ գնահատողի կողմից չեն կիրառվել գնի վրա չնչին ազդեցության պատճառով.

| Համեմատության տարրերը                                                                                                 | Զախման միավորը | Գնահատվող օբյեկտը                             | Անալոգ օբյեկտ №1                                                                  | Անալոգ օբյեկտ №2                                                                  | Անալոգ օբյեկտ №3                                                                  |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------|-----------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------|
| Հասցե                                                                                                                 |                | ք. Գյումրի Ա. Խաչատրյան փողոց                 | ք. Գյումրի Արևելյան փողոց                                                         | ք. Գյումրի Կոմիտասի փողոց                                                         | ք. Գյումրի Երևանյան խճուղի                                                        |
| Տեղակատվության աղբյուրը                                                                                               |                |                                               | <a href="https://www.list.am/item/20965032">https://www.list.am/item/20965032</a> | <a href="https://www.list.am/item/21607590">https://www.list.am/item/21607590</a> | <a href="https://www.list.am/item/21240040">https://www.list.am/item/21240040</a> |
| Վաճառքի կամ առաջարկի գինը                                                                                             | դրամ           |                                               | 10 455 000                                                                        | 12 000 000                                                                        | 9 681 000                                                                         |
| Մակերես                                                                                                               | քմ             | 712,6                                         | 1 000                                                                             | 990                                                                               | 680                                                                               |
| Վաճառքի կամ առաջարկի գինը                                                                                             | դր/քմ          |                                               | 10455                                                                             | 12121                                                                             | 14237                                                                             |
| ըստ շուկայի վիճակի, վաճառքի պայմանների և վաճառքի ամսաթվի,                                                             |                |                                               | 10.2024թ.                                                                         | 10.2024թ.                                                                         | 10.2024թ.                                                                         |
| Ուղղումը                                                                                                              | %              |                                               | -10%                                                                              | -10%                                                                              | -10%                                                                              |
| Ուղղումը                                                                                                              | դրամ           |                                               | -1046                                                                             | -1212                                                                             | -1424                                                                             |
| Ուղղված գինը                                                                                                          | դր/քմ          |                                               | 9410                                                                              | 10909                                                                             | 12813                                                                             |
| Գույքային իրավունքներն (այդ թվում կառուցապատման) ու սահմանափակումները (այդ թվում իրավունքների և օգտագործման նկատմամբ) |                |                                               | գնահատվողի նման                                                                   | գնահատվողի նման                                                                   | գնահատվողի նման                                                                   |
| Ուղղումը                                                                                                              | %              |                                               | 0%                                                                                | 0%                                                                                | 0%                                                                                |
| Ուղղումը                                                                                                              | դրամ           |                                               | 0                                                                                 | 0                                                                                 | 0                                                                                 |
| Ուղղված գինը                                                                                                          | դր/քմ          |                                               | 9410                                                                              | 10909                                                                             | 12813                                                                             |
| Նպատակային և գործառնական նշանակությունը                                                                               |                | բնակավայրերի, հողատեսքը բնակելի կառուցապատման | բնակավայրերի, հողատեսքը բնակելի կառուցապատման                                     | բնակավայրերի, հողատեսքը բնակելի կառուցապատման                                     | բնակավայրերի, հողատեսքը բնակելի կառուցապատման                                     |
| Ուղղումը                                                                                                              | %              |                                               | 0%                                                                                | 0%                                                                                | 0%                                                                                |

Գնահատող

*Զուհյան*

# ՀՀ ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ «ԱՐՄԷՔՍՊԵՐՏԻԶԱ» ՍՊԸ



|                                                                                                   |       |                                                  |                                                  |                                                  |                                                  |
|---------------------------------------------------------------------------------------------------|-------|--------------------------------------------------|--------------------------------------------------|--------------------------------------------------|--------------------------------------------------|
| Ուղղումը                                                                                          | դրամ  |                                                  | 0                                                | 0                                                | 0                                                |
| Ուղղված գինը                                                                                      | դր/քմ |                                                  | 9410                                             | 10909                                            | 12813                                            |
| Կոմունիկացիաների առկայությունը և հնարավորությունը                                                 |       | ունի հնարավորություն                             | ունի հնարավորություն                             | ունի հնարավորություն                             | ունի հնարավորություն                             |
| Ուղղումը                                                                                          | %     |                                                  | 0%                                               | 0%                                               | 0%                                               |
| Ուղղումը                                                                                          | դրամ  |                                                  | 0                                                | 0                                                | 0                                                |
| Ուղղված գինը                                                                                      | դր/քմ |                                                  | 9410                                             | 10909                                            | 12813                                            |
| Կառուցապատման չափորոշիչները և սահմանափակումները                                                   |       |                                                  | գնահատվողի նման                                  | գնահատվողի նման                                  | գնահատվողի նման                                  |
| Ուղղումը                                                                                          | %     |                                                  | 0%                                               | 0%                                               | 0%                                               |
| Ուղղումը                                                                                          | դրամ  |                                                  | 0                                                | 0                                                | 0                                                |
| Ուղղված գինը                                                                                      | դր/քմ |                                                  | 9410                                             | 10909                                            | 12813                                            |
| ըստ հողամասի չափերի (մակերես, լայնություն, երկարություն, երկրաչափական կառուցվածք, ճակատային մաս), |       | 712,6                                            | 1 000                                            | 990                                              | 680                                              |
| Ուղղումը                                                                                          | %     |                                                  | 5%                                               | 5%                                               | 0%                                               |
| Ուղղումը                                                                                          | դրամ  |                                                  | 470                                              | 545                                              | 0                                                |
| Ուղղված գինը                                                                                      | դր/քմ |                                                  | 9880                                             | 11455                                            | 12813                                            |
| Տեղադրությունը (գտնվելու վայրը), տեղակայման գրավչությունը                                         |       | տեղադրությունը լավ, տեղակայման գրավչությունը լավ | տեղադրությունը լավ, տեղակայման գրավչությունը լավ | տեղադրությունը լավ, տեղակայման գրավչությունը լավ | տեղադրությունը լավ, տեղակայման գրավչությունը լավ |
| Ուղղումը                                                                                          | %     |                                                  | 0%                                               | 0%                                               | 0%                                               |
| Ուղղումը                                                                                          | դրամ  |                                                  | 0                                                | 0                                                | 0                                                |
| Ուղղված գինը                                                                                      | դր/քմ |                                                  | 9880                                             | 11455                                            | 12813                                            |
| Թեքությունը                                                                                       |       | հարթ է                                           | հարթ է                                           | հարթ է                                           | հարթ է                                           |
| Ուղղումը                                                                                          | %     |                                                  | 0%                                               | 0%                                               | 0%                                               |
| Ուղղումը                                                                                          | դրամ  |                                                  | 0                                                | 0                                                | 0                                                |
| Ուղղված գինը                                                                                      | դր/քմ |                                                  | 9880                                             | 11455                                            | 12813                                            |
| Տրանսպորտային հանգույցների առկայությունը, մատչելիությունը                                         |       | մատչելիությունը լավ                              | մատչելիությունը լավ                              | մատչելիությունը լավ                              | մատչելիությունը լավ                              |
| Ուղղումը                                                                                          | %     |                                                  | 0%                                               | 0%                                               | 0%                                               |
| Ուղղումը                                                                                          | դրամ  |                                                  | 0                                                | 0                                                | 0                                                |
| Ուղղված գինը                                                                                      | դր/քմ |                                                  | 9880                                             | 11455                                            | 12813                                            |
| Հողերի արժեքի վրա ազդող այլ գործոններ                                                             |       |                                                  |                                                  |                                                  |                                                  |
| Ուղղումը                                                                                          | %     |                                                  | 0%                                               | 0%                                               | 0%                                               |
| Ուղղումը                                                                                          | դրամ  |                                                  | 0                                                | 0                                                | 0                                                |
| Ուղղված գինը                                                                                      | դր/քմ |                                                  | 9880                                             | 11455                                            | 12813                                            |

*Ջուլիան*

# ՀՀ ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ «ԱՐՄԷՔՍՊԵՐՏԻԶԱ» ՍՊԸ



|                   |       |  |           |       |       |
|-------------------|-------|--|-----------|-------|-------|
| Կշռային գործակիցը |       |  | 0,333     | 0,333 | 0,333 |
| Շուկայական արժեքը | դր/քմ |  | 11 382,54 |       |       |
| Արժեքը ՀՀ դրամով  |       |  | 8 111 195 |       |       |

Գնահատվող՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Անդրանիկ Խաչատրյան փողոցի թիվ 25 հասցեում գտնվող հողամասի շուկայական արժեքը կազմում է 8 111 195 ՀՀ դրամ:

## Շենքեր, շինությունների վերարտադրման ծախսերի որոշում

Շենքերի և շինությունների վերարտադրման (կամ փոխարինման) ծախսերը որոշվում են.

1) համապատասխան մասնագիտացված նորմատիվային տեղեկագրերում ներկայացված կամ հավաստի այլ աղբյուրներից ստացված տվյալների հիման վրա:

2) գնահատման ամսաթվի դրությամբ շուկայական գներով այն ծախսերի հաշվարկմամբ, որոնք անհրաժեշտ են նույնատիպ նոր շենքի (կամ շինության) կառուցման համար՝ օգտագործելով գնահատվող շենքի (կամ շինության) կառուցման համար օգտագործված նյութերը և տեխնոլոգիաները կամ այն ծախսերի հաշվարկմամբ, որոնք անհրաժեշտ են գնահատվող շենքին (կամ շինությանը) համապատասխանող օգտակարությամբ նոր շենքի (կամ շինության) (ժամանակակից պահանջներին համապատասխանող փոխարինիչի) կառուցման համար:

3) մինչև նույն շուկայական պայմաններում նմանատիպ շենքերի (կամ շինությունների) կառուցման համար շինարարության պայմանագրերում նշված արժեքի տվյալների հիման վրա:

Շենքեր, շինությունների վերարտադրման (փոխարինման) ծախսերի նորմատիվի ընտրության հարցում, որպես ուղենիշ են հանդիսացել 2009թ. «Շինարարական Աշխատանքների Խոշորացված Ցուցանիշները», ինչպես նաև կառուցապատման աշխատանքներով զբաղվող ընկերությունների հետ խորհրդակցման արդյունքները:

Համաձայն ստանդարտի ծախսային մոտեցումը պետք է ներառի բոլոր ծախսերը, որոնք տվյալ մասնակիցը կարող է կրել:

Արժեքի տարրերը կարող են տարբերվել՝ կախված գնահատվող օբյեկտի տեսակից և պետք է ներառեն ուղղակի և անուղղակի ծախսեր, որոնք պահանջվում են գնահատման ամսաթվի դրությամբ օբյեկտի փոխարինման (վերարտադրման) համար:

Որոշ ընդհանուր կետեր, որոնք պետք է հաշվի առնել, մասնավորապես՝

ա. ուղղակի ծախսեր (նյութեր, աշխատուժ),

բ. անուղղակի ծախսեր (տրանսպորտային ծախսեր, տեղադրման ծախսեր, մասնագիտական վճարներ (նախագծային, թույլտվություն, ճարտարապետական, իրավաբանական և այլն), այլ վճարներ (միջնորդավճարներ և այլն), ընդհանուր ծախսեր, հարկեր, ֆինանսական ծախսեր (օրինակ՝ պարտքային ֆինանսավորման տոկոսներ) և ձեռնարկատիրական շահույթ):



Աշխատանքների և շինհրապարակի կազմակերպման հետ կապված ծախսերը (ժամանակավոր շենքերի և կառուցվածքների) ձմեռային պայմաններում աշխատանքի համար հավելումը աշխատանքային պայմանները (նեղվածություն, անապատային, կիսաանապատային) սահմանված հարկերը և այլ առանձին ծախսերը հաշվի են առնվում շինարարության հաշվարկային արժեքի հաշվարկներում: ՇԱԽՑ-ում ընտրված ցուցանիշները արդեն ներառում են ուղղակի ծախսերը: Դրանց պետք է հավելել.

| Անվանումը<br>(ՇԱԽՑ<br>անալոգը)          | Շինարարության<br>արժեքը | Շենքի<br>(շինության)<br>արտաքին<br>ծավալը կամ<br>մակերեսը |      |   | Սպառողական գների ինդեքս 2009-<br>2023թթ<br><a href="https://armstat.am/am/?nid=12&amp;id=07001">https://armstat.am/am/?nid=12&amp;id=07001</a> |   | Լրիվ<br>վերարտադրման<br>կամ<br>փոխարինման<br>ծախսերը |
|-----------------------------------------|-------------------------|-----------------------------------------------------------|------|---|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---|------------------------------------------------------|
|                                         |                         | Մ x Բ (h) x Գհ                                            |      |   |                                                                                                                                                |   |                                                      |
| Չափման<br>միավորը                       | դրամ/քմ կամ<br>խմ       | քառ.<br>մ                                                 | մ    | - | %                                                                                                                                              | % | դրամ                                                 |
| Շինություններ<br>(ՇԱԽՑ 2009<br>ԳՈԻ 33)  | 28340                   | 173,69                                                    | 2,43 | 1 | 1,68                                                                                                                                           |   | 20 095 102                                           |
| Շինություններ<br>(ՇԱԽՑ 2009<br>ԳՈԻ 282) | 20300                   | 34,09                                                     | 2,4  | 1 | 1,68                                                                                                                                           |   | 2 790 253                                            |
| Ընդամենը                                |                         |                                                           |      |   |                                                                                                                                                |   | 22 885 355                                           |

#### Շենքերի և շինությունների կուտակված մաշվածության որոշում

Գոյություն ունեն մաշվածության երեք տեսակներ՝ ֆիզիկական, գործառնական և տնտեսական:

Կուտակված մաշվածությունը՝ շենքերի և շինությունների ֆիզիկական, գործառնական և տնտեսական մաշվածության հանրագումարն է:

Ֆիզիկական, գործառնական և տնտեսական մաշվածությունները լինում են.

ա) վերականգնվող՝ երբ մաշվածության վերացման հետ կապված ծախսերը տնտեսապես արդարացված են,

բ) չվերականգնվող՝ երբ մաշվածության վերացման հետ կապված ծախսերը տնտեսապես արդարացված չեն:

Ֆիզիկական մաշվածություն՝ գնահատվող օբյեկտի կամ դրա բաղադրիչների ֆիզիկական մաշվածության պատճառով օգտակարության ցանկացած կորուստ, որն առաջացել է օգտագործման հետևանքով և տարիքից:

# ՀՀ ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ «ԱՐՄԷՔՍՊԵՐՏԻԶԱ» ՍՊԸ



## Վերացվող ֆիզիկական մաշվածքի հաշվարկ

| N/<br>N | Կատարվող աշխատանքի անվանումը  | Վերարտադրման կամ փոխարինման ծախսերի կառուցվածքը | Վերարտադրման կամ փոխարինման ծախսերի կառուցվածքը | Ֆիզիկական մաշվածությունը (չկատարած աշխատանքներ) | Ֆիզիկական մաշվածությունը (չկատարած աշխատանքներ) | Մնացորդային արժեք |
|---------|-------------------------------|-------------------------------------------------|-------------------------------------------------|-------------------------------------------------|-------------------------------------------------|-------------------|
|         | Զափման միավորը                | %                                               | դրամ                                            | %                                               | դրամ                                            | դրամ              |
| 1       | Հողային աշխատանքներ           | 3%                                              | 686 561                                         | 0%                                              | 0                                               | 686 561           |
| 2       | Հիմքեր                        | 5,8%                                            | 1 327 351                                       | 0%                                              | 0                                               | 1 327 351         |
| 3       | Պատեր և միջնապատեր            | 37,5%                                           | 8 582 008                                       | 0%                                              | 0                                               | 8 582 008         |
| 4       | Ծածկ                          | 12,5%                                           | 2 860 669                                       | 5%                                              | 143 033                                         | 2 717 636         |
| 5       | Տանիք                         | 5,2%                                            | 1 190 038                                       | 5%                                              | 59 502                                          | 1 130 537         |
| 6       | Հարդարման աշխատանքներ         | 17,5%                                           | 4 004 937                                       | 20%                                             | 800 987                                         | 3 203 950         |
| 7       | Դռներ, պատուհաններ            | 10%                                             | 2 288 535                                       | 20%                                             | 457 707                                         | 1 830 828         |
| 8       | Սանտեխնիկական աշխատանքներ     | 5,7%                                            | 1 304 465                                       | 20%                                             | 260 893                                         | 1 043 572         |
| 9       | Էլեկտրամոնտաժային աշխատանքներ | 1,5%                                            | 343 280                                         | 20%                                             | 68 656                                          | 274 624           |
| 10      | Այլ աշխատանքներ               | 1,3%                                            | 297 510                                         | 20%                                             | 59 502                                          | 238 008           |
| 11      | Ընդամենը                      | 100%                                            | 22 885 355                                      | 8%                                              | 1 850 281                                       | 21 035 074        |

## Կարճաժամկետ ծառայության էլեմենտների չվերականգնվող մաշվածքի հաշվարկ

| N/N | Աշխատանքի անվանումը           | Կարճաժամկետ ծառայության էլեմենտների չվերականգնվող մաշվածքի հաշվարկ | Իրական ծառայության ժամկետը | Նորմատիվային ծառայության ժամկետ | Մաշվածքի գործակիցը | Մաշվածքը  |
|-----|-------------------------------|--------------------------------------------------------------------|----------------------------|---------------------------------|--------------------|-----------|
|     |                               | դրամ                                                               | տարի                       | տարի                            |                    | դրամ      |
| 1   | Տանիք                         | 1 130 537                                                          | 15                         | 40                              | 0,38               | 423 951   |
| 2   | Հարդարման աշխատանքներ         | 3 203 950                                                          | 15                         | 30                              | 0,50               | 1 601 975 |
| 3   | Դռներ, պատուհաններ            | 1 830 828                                                          | 15                         | 25                              | 0,60               | 1 098 497 |
| 4   | Սանտեխնիկական աշխատանքներ     | 1 043 572                                                          | 15                         | 25                              | 0,60               | 626 143   |
| 5   | Էլեկտրամոնտաժային աշխատանքներ | 274 624                                                            | 15                         | 40                              | 0,38               | 102 984   |
| 6   | Այլ աշխատանքներ               | 238 008                                                            | 15                         | 40                              | 0,38               | 89 253    |
| 7   | Ընդամենը                      | 7 721 519                                                          |                            |                                 |                    | 3 942 803 |

## Երկարաժամկետ ծառայության էլեմենտների չվերականգնվող մաշվածքի հաշվարկ

| N/N | Արժեքի անվանումը                                           | դրամ       |
|-----|------------------------------------------------------------|------------|
| 1   | Վերարտադրման ծախսեր                                        | 22 885 355 |
| 2   | Վերացվող ֆիզիկական մաշվածությունը (հետաձգված վերանորոգում) | 1 850 281  |

Գնահատող

*Շահապետյան*



|   |                                                                      |            |
|---|----------------------------------------------------------------------|------------|
| 3 | Կարճաժամկետ ծառայության էլեմենտների չվերականգնվող մաշվածքի հաշվարկ   | 7 721 519  |
| 4 | Ընդամենը երկարակյաց էլեմենտների արժեքը չվերացվող ֆիզիկական մաշվածքով | 13 313 555 |
| 5 | Շինության փաստացի տարիքը                                             | 70         |
| 6 | Շահագործման նորմատիվային ժամկետը (տարի)                              | 100        |
| 7 | Մաշվածքի հաշվարկման գործակիցը                                        | 0,70       |
| 8 | Երկարաժամկետ ծառայության էլեմենտների չվերացվող մաշվածքի արժեքը       | 9 319 489  |

**Ընդհանուր ֆիզիկական մաշվածության հաշվարկը**

| N/N | Ֆիզիկական մաշվածքի տեսակը                                          | դրամ              |
